ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

0010 ք. Երևան, Կառավարական տուն 1

№ 02/05.1/17511-2026

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ-ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
ԴԱՎԻԹ ԱՌԱՔԵԼՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Առաքելյան,

Համաձայն «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 77-րդ հոդվածի՝ Ձեզ ենք ներկայացնում «Հայաստանի Հանրապետության տոների և հիշատակի օրերի մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (Պ-1340-22.04.2026-ՊԻ-011/0) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունը:

Միաժամանակ հայտնում ենք, որ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում օրենքի նախագիծը քննարկելիս հարակից զեկուցմամբ հանդես կգա Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ Լուսինե Քոչարյանը:

Հարգանքով՝

/ԱՐԱՅԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Կատարող՝ Պետրոս Քացախյան
Ազգային ժողովի հետ կապերի վարչության խորհրդական՝ կառուցվածքային ստորաբաժանումներում առանձին գործառույթներ համակարգող
Հեռ. 010515686
Էլ փոստ՝ petros.qatsakhyan@gov.am

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՈՆԵՐԻ ԵՎ ՀԻՇԱՏԱԿԻ ՕՐԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Պ-1340-22.04.2026-ՊԻ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ

Հայաստանի Հանրապետության կառավարությունը «Հայաստանի Հանրապետության տոների և հիշատակի օրերի մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) վերաբերյալ ստորև ներկայացնում է իր դիտարկումներն ու առաջարկությունները:

1. Նախագծի 1-ին հոդվածի համաձայն՝ Ամանոր և Սուրբ ծննդյան տոները նշվում են դեկտեմբերի 31-ից հունվարի 2-ը: Այս առումով առաջարկում ենք «հունվարի 2-ը» բառերից հետո լրացնել «ներառյալ» բառը՝ տարընկալումներից խուսափելու նպատակով:

2. Նախագծի 10-րդ հոդվածի համաձայն՝ «Հայաստանի Հանրապետության քաղաքացու օր՝ նշվում է ապրիլի վերջին շաբաթ օրը: Մայիսի 1-ը երկուշաբթի լինելու դեպքում Հայաստանի Հանրապետության քաղաքացու օրը նշվում է ապրիլի վերջին կիրակի օրը»:

Միաժամանակ գործող Օրենքի 4.1-ին հոդվածի համաձայն՝ «Հայաստանի Հանրապետության քաղաքացու օր՝ նշվում է ապրիլի վերջին շաբաթ օրը: Մայիսի 1-ը շաբաթ օրվա հետ համընկնելու դեպքում Հայաստանի Հանրապետության քաղաքացու օրը նշվում է ապրիլի վերջին կիրակի օրը:»:

Այս առումով հիմնավորման մեջ չի ներկայացվել, թե ինչ իրավական կամ գործնական խնդիր է առաջացնում գործող կարգավորումը և ինչ նպատակ է հետապնդում առաջարկվող փոփոխությունը: Հաշվի առնելով վերոգրյալը՝ առաջարկվում է պահպանել գործող կարգավորումը:

Միևնույն ժամանակ հայտնում ենք, որ նման կարգավորման պարագայում, օրինակ՝ հաջորդող՝ 2027 թվականին ապրիլի վերջին շաբաթ օրը ապրիլի 24-ն է՝ Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակի օրը, ուստի, նախատեսված կարգավորումն առաջարկում ենք վերանայել և սահմանել որևէ հստակ օր՝ որպես Հայաստանի Հանրապետության քաղաքացու օր՝ հետագայում այսպիսի (հիշատակի և տոն օրերի) համընկնումներից խուսափելու համար:

3. Նախագծի 11-րդ հոդվածում առաջարկում ենք «Հայ կինոյի օր՝ նշվում է ապրիլի 13-ին» բառերը փոխարինել «Հայ կինոյի օր՝ նշվում է ապրիլի 16-ին» բառերով:

4. Նախագծի 15-րդ հոդվածի վերնագրում և տեքստում «Երկրապահ-աշխարհազորայինի» բառերը անհրաժեշտ է փոխարինել «Երկրապահի» բառով, քանի որ «աշխարհազորային» եզրույթը օրենսդրորեն ամրագրված չէ:

5. Նախագծի 22-րդ հոդվածի համաձայն՝ «Խորհրդային տարիներին բռնադատվածների հիշատակի օր՝ նշվում է հունիսի 14-ին:»: Արդյունքում, նոր խմբագրությամբ լրացվում է «խորհրդային տարիներին» ձևակերպումը: Հարկ է նկատել, որ «Բռնադատվածների մասին» օրենքի 1-ին հոդվածն արդեն իսկ սահմանում է անձանց այն

շրջանակը, որոնք կարող են համարվել բռնադատված: Ուստի, Նախագծում կոնկրետ ժամանակաշրջանի մասին նշում կատարելու անհրաժեշտությունը բացակայում է, հետևաբար առաջարկում ենք նոր խմբագրությամբ լրացվող ձևակերպումները հանել:

6. Նախագծի 29-րդ հոդվածի վերաբերյալ հայտնում ենք, որ «Հայաստանի Հանրապետության տոների և հիշատակի օրերի մասին» օրենքի 18-րդ հոդվածին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի հունիսի 23-ի N 822-Ն որոշման համաձայն՝ Երևանի օրը նշվում է հոկտեմբերի երկրորդ շաբաթ օրը:

Երևանի օրը նշելու ամսվա և օրվա ընտրությունն ունի ոչ միայն պատմական, այլ նաև խորհրդանշական կարևոր նշանակություն: «Էրեբունի-Երևան»-ի առաջին պաշտոնական տոնակատարությունը՝ մայրաքաղաքի հիմնադրման 2750-րդ տարեդարձը, անց է կացվել 1968 թվականի հոկտեմբերին: Հոբելյանական հանդիսությունները տևել են մոտ մեկ շաբաթ: Միջոցառումները շատ էին, բազմազան ու բովանդակալից. Հրատարակվել են Երևանի պատմությունը ներկայացնող նոր գրքեր, էկրան բարձրացել Երևանի առօրյան արտացոլող նոր ֆիլմեր, բացվել ցուցահանդեսներ, ստեղծվել Երևանի մասին նոր երգեր, թողարկվել բազմապիսի հոբելյանական հուշանվերներ, որոնք այժմ էլ հիշեցնում են այդ շքեղ տոնակատարության մասին:

Քաղաքի հրապարակներում, պողոտաներում, այգիներում, պուրակներում ու փողոցներում պատրաստված բեմահարթակների վրա մի քանի օր շարունակվել են արվեստի խմբերի համերգները, երգի ու ցնծության հանդեսները: Ավանդական դարձած այս տոնը տարեցտարի դարձել է ավելի բազմաբնույթ, ավելի ժողովրդական:

Էրեբունիի հիմնադրման 2750-ամյակը անցկացվել է հոկտեմբերի սկզբին, և հետո այդ ժամանակահատվածը դարձել է ավանդական: Բայց ընտրությունը նաև գործնական ու մշակութային հիմքեր ունի հոկտեմբերի երկրորդ շաբաթը Երևանում համարվում է ամենահարմար «քաղաքային տոնի եղանակը»՝ մեղմ աշուն, լի փողոցներ, մշակութային ակտիվ շրջան: Ավանդաբար այս տոնը դարձել է ոչ միայն քաղաքի, այլև ամբողջ երկրի սիրելի միջոցառումը, որը համախմբում է հազարավոր մարդկանց՝ հիշեցնելով, որ Երևանը ոչ միայն պատմություն ունի, այլև զգացողություն է՝ սեր, հիշողություն և մշտապես նոր ծնվող էներգիա: Տոնի առթիվ քաղաքում կազմակերպվում են մի շարք փառատոներ, երաժշտական միջոցառումներ և տոնական համերգներ:

Նկատի ունենալով վերոգրյալը՝ հայտնում ենք, որ Երևանի օրվա վերաբերյալ կարգավորումներն անհրաժեշտ է թողնել անփոփոխ: Բացի այդ, օրենքում ամրագրելու դեպքում՝ առաջարկում ենք նախատեսել կարգավորումներ, որոնք հնարավորություն կտան, անհրաժեշտության դեպքում, ավագանու որոշմամբ Երևանի օրը տեղափոխելու մեկ այլ օր:

7. Նախագծի 26-րդ հոդվածի համաձայն սահմանվում է Նավասարդը, ըստ այդմ՝ «Նավասարդ՝ ազգային ավանդույթների, մշակույթի և համայն աշխարհի հայերի միասնության օր՝ նշվում է օգոստոսի 11-ին:»: Ազգային տոնացույցի օրերից Նավասարդի ամրագրումը Նախագծում կարող է հանգեցնել Օրենքի կարգավորման շրջանակի ընդլայնման, քանի որ հայկական ազգային և մշակութային տոնացույցում առկա են բազմաթիվ այլ ավանդական և ինքնության տեսանկյունից կարևոր օրեր ևս: Հետևաբար, մեկ առանձին օրվա օրենսդրական ամրագրումը կարող է հիմք ստեղծել նույնաբնույթ մյուս

օրերը ևս օրենքում ներառելու անհրաժեշտության, ինչը դուրս կգա օրենքի կարգավորման առարկայի ընդհանուր տրամաբանությունից: Ուստի, առաջարկում ենք Նախագծի կարգավորման առարկայից հանել քննարկվող դրույթը:

8. Նախագծով 37-րդ հոդվածով առաջարկվում է Հայ Առաքելական Եկեղեցու կողմից նշվող հինգ տաղավար տոներին հաջորդող մեռելոց-հիշատակի օրերը սահմանել ոչ աշխատանքային օրեր: Նախաձեռնությունը միտված է ազգային-եկեղեցական ավանդույթների պահպանմանը և հասարակական համերաշխության ամրապնդմանը: Միաժամանակ, հարկ ենք համարում արձանագրել, որ ոչ աշխատանքային օրերի ավելացումը կարող է ունենալ մակրոտնտեսական, հարկաբյուջետային, արտադրողականության և գործարար միջավայրի վրա ազդեցություններ: Նախագծին կից ներկայացված հիմնավորումներում նման ազդեցությունների քանակական գնահատում առկա չէ, ինչի պայմաններում նախաձեռնության ընդունումը կարող է առաջացնել տնտեսական ակտիվության նվազման, հարկային եկամուտների հնարավոր կորստի, պետական և մասնավոր հատվածների լրացուցիչ ծախսերի, ինչպես նաև աշխատաժամանակի արդյունավետության նվազման ռիսկեր:

Միաժամանակ, կարևոր ենք համարում ընդգծել, որ միջազգային փորձը ևս միակարծիք չէ ոչ աշխատանքային օրերի ավելացման հարցում՝ ընդգծելով, որ արդյունքը կախված է երկրի տնտեսական կառուցվածքից, արտադրողականության մակարդակից, աշխատանքի շուկայի առանձնահատկություններից, հանրային հատվածի չափից և այլն:

Մասնավորապես, Մեծ Բրիտանիայի Համայնքների պալատի գրադարանի 2024 թվականի հետազոտությունն ընդգծում է, որ լրացուցիչ բանկային արձակուրդի ընդհանուր տնտեսական ազդեցությունը դժվար է ճշգրիտ չափել, սակայն այն ծախս է տնտեսության համար: 2022 թվականի ազդեցության գնահատմամբ՝ մեկ լրացուցիչ բանկային արձակուրդի՝ ՀՆԱ-ի վրա ունեցած ծախսը գնահատվել է շուրջ 2.4 մլրդ ֆունտ, միևնույն ժամանակ, փաստաթղթում ընդգծվում է, որ արտադրանքի կորուստը որոշ ոլորտներում կարող է մասամբ փոխհատուցվել մանրածախ առևտրի, հյուրանոցային և զբոսաշրջային ոլորտների աճով[1]:

Դանիայի պարագայում նկատվել է հակառակ միտումը. չեղարկվել է մեկ հանրային տոն՝ աշխատուժի առաջարկը, ՀՆԱ-ն և հարկաբյուջետային եկամուտները մեծացնելու նպատակով: Ընդ որում՝ ԱՄՀ-ի ուսումնասիրությամբ, Դանիայի դեպքում աշխատուժի առաջարկի ակնկալվող աճը գնահատվել է մոտ 0.14-0.34%[2]:

Գերմանիայի վերաբերյալ կատարված ուսումնասիրությունը ևս ընդգծում է, որ մեկ հանրային տոնի տարեկան ՀՆԱ-ի վրա ազդեցությունը կարող է լինել մոտ 0.055-0.28%՝ կախված այն հանգամանքից, թե տնտեսության որ հատվածներն է այն ընդգրկում[3]:

---

[1] Annalise Murray, Cost of a bank holiday, Research Briefing, House of Commons Library, 18, September 2024, Number 5775, https://researchbriefings.files.parliament.uk/documents/SN05775/SN05775.pdf

[2] Minasyan, Gohar. Cancellation of Public Holiday in Denmark. IMF selected Issues Paper (SIP/2023/053). Washington, D. C.: International Monetary Fund, https://www.imf.org/-/media/files/publications/selected-issues-papers/2023/english/sipea2023053.pdf

[3] Brüll, E. (2026). *Holy days, lost days?* (ZEW Discussion Paper No. 25-056). ZEW – Leibniz Centre for European Economic Research. https://www.zew.de/fileadmin/FTP/dp/dp25056.pdf

Դիտարկված միջազգային փորձը ցույց է տալիս, որ միջազգային լավագույն

մոտեցումը ոչ թե ոչ աշխատանքային օրերի մեխանիկական ավելացումն է, այլ նախնական ազդեցության գնահատումը, ոլորտային վերլուծությունը, պետական և մասնավոր հատվածների ծախսերի հաշվարկը և այլընտրանքային լուծումների դիտարկումը:

Եթե Նախագծի նպատակը սոցիալական բարեկեցության, հանգստի, ընտանեկան կյանքի և աշխատանք-կյանք հավասարակշռության բարելավումն է, ապա կարող են դիտարկվել պակաս ծախսատար և ավելի թիրախային լուծումներ, մասնավորապես՝

Մեռելոց-հիշատակի օրերը կարող են պահպանվել որպես հիշատակի օրեր՝ առանց համընդհանուր ոչ աշխատանքային կարգավիճակի: Սա թույլ կտա պահպանել մշակութային և հասարակական նշանակությունը՝ առանց տարեկան արդյունավետ աշխատաժամանակի կրճատման:

Կարելի է կիրառել աշխատանքային օրերի տեղափոխման մեխանիզմ՝ այնպես, որ լրացուցիչ հանգստյան օրերը չավելացնեն տարվա ընդհանուր ոչ աշխատանքային օրերի թիվը: Գործող օրենքն արդեն նախատեսում է, որ տոների և հիշատակի օրերի հետ կապված Կառավարությունը կարող է աշխատանքային օրերը տեղափոխել:

Նույն դիտարկումը վերաբերում է Նախագծի 39-րդ հոդվածին, որի նոր խմբագրության պարագայում կարգավորումն ստացվում է, որ Կառավարության որոշմամբ կարող են սահմանել ոչ աշխատանքային օրեր, առանց աշխատանքային օրերի տեղափոխման, միաժամանակ, դրույթը լրացվում է հետևյալ ձևակերպումներով՝ «բայց ոչ ի հաշիվ հաջորդող կամ նախորդող հանգստյան օրերի»: Նախ, պարզաբանման կարիք ունի «ի հաշիվ» ձևակերպումը, որովհետև եթե նկատի է առնվում հանգստյան օրն աշխատանքային համարելու հնարավորությունը, ապա այդպես պետք է նշել: Բացի այդ, վերահաստատելով արձանագրումն առ այն, որ ոչ աշխատանքային օրերի ավելացումը կարող է ունենալ մակրոտնտեսական, հարկաբյուջետային, արտադրողականության և գործարար միջավայրի վրա ազդեցություններ, հարկ է հատուկ ընդգծել, որ Կառավարության որոշումներով կարող են սահմանվել նաև պետության համար կարևոր նշանակություն ունեցող առանձին օրերի հետ կապված կազմակերպական կամ աշխատանքային ռեժիմի առանձնահատկություններ (օրինակ՝ միջազգային կամ պետական նշանակության միջոցառումների, օրինակ վերջերս՝ Եվրոպական քաղաքական համայնքի գագաթնաժողովի անցկացման օրերի կապակցությամբ), որոնք իրենց բնույթով չեն նույնացվում օրենքով սահմանված տոների կամ հիշատակի օրերի ինստիտուտի հետ: Հետևաբար, առաջարկվում է Նախագծից հանել քննարկվող կարգավորումը:

9. Նախագծի 40-րդ հոդվածի համաձայն՝ Ազգային փոքրամասնություններին պատկանող՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիները կարող են նշել իրենց ազգային տոները և հիշատակի օրերը, եթե դրանք չեն հակասում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը: Հայաստանի Հանրապետության կառավարությունը, ազգային փոքրամասնությունների առաջարկով, որոշում է ազգային փոքրամասնություն-ների համար ոչ աշխատանքային օրերը: Նման խմբագրության արդյունքում, կարգավորումը լրացվում է նոր նախադասությամբ: Այս առումով, առաջարկում ենք վերանայել «որոշում է» ձևակերպումը՝ պահպանելով ոչ աշխատանքային օրերի քանակը չավելացնելու և աշխատանքային օրերի տեղափոխման գործող իրավական մեխանիզմի տրամաբանությունը:

Ամփոփելով վերոգրյալը, Հայաստանի Հանրապետության կառավարությունն

առաջարկում է Նախագծով նախատեսվող կարգավորումները վերանայել նշված դիտարկումների և առաջարկությունների համատեքստում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 465 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ (ՀԱՐԱԿԻՑ ՋԵԿՈՒՑՈՂ) ՆՇԱՆԱԿԵԼՈՒ
Մ Ա Ս Ի Ն

Հիմք ընդունելով «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 66-րդ հոդվածի 2-րդ մասը՝

Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ Լուսինե Քոչարյանին նշանակել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում «Հայաստանի Հանրապետության տոների և հիշատակի օրերի մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը (Պ-1340-22.04.2026-ՊԻ-011/0) քննարկելիս Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Մ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Երևան

25.05.2026
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ

ՆԱԽԱԳԻԾ

Պ-1340-22.04.2026-ՊԻ-011/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՈՆԵՐԻ ԵՎ ՀԻՇԱՏԱԿԻ ՕՐԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Հայաստանի Հանրապետության տոների եւ հիշատակի օրերի մասին» 2001թ. հունիսի 24-ի ՀՕ-200-Ն օրենքը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ ՏՈՆԵՐԻ ԵՒ ՀԻՇԱՏԱԿԻ ՕՐԵՐԻ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Ամանոր եւ Սուրբ-ծննդյան տոներ

Ամանոր եւ Սուրբ-ծննդյան տոներ՝ նշվում են դեկտեմբերի 31-ից հունվարի 2-ը (Ամանոր) եւ հունվարի 6 (Սուրբ Ծնունդ եւ Հայտնություն), ոչ աշխատանքային օրեր:

Հոդված 2. Հայրենիքի պաշտպանության համար զոհվածների հիշատակի օր

Հայրենիքի պաշտպանության համար զոհվածների հիշատակի օր՝ նշվում է հունվարի 27-ին, ոչ աշխատանքային օր:

Հոդված 3. Բանակի օր

Բանակի օր՝ նշվում է հունվարի 28-ին, ոչ աշխատանքային օր:

Հոդված 4. Մեսրոպ Մաշտոցի օր

Մեսրոպ Մաշտոցի օր՝ նշվում է փետրվարի 17-ին:

Հոդված 5. Մայրենի լեզվի օր

Մայրենի լեզվի օր՝ նշվում է փետրվարի 21-ին:

Հոդված 6. Սուրբ Վարդանանց տոն

Սուրբ Վարդանանց տոն՝ բարի գործի եւ ազգային տուրքի օր՝ նշվում է Սուրբ Զատիկից 8 շաբաթ առաջ՝ հինգշաբթի օրը:

Հոդված 7. Ադրբեջանական ԽՍՀ-ում կազմակերպված հայերի ջարդերի զոհերի հիշատակի

Ադրբեջանական ԽՍՀ-ում կազմակերպված հայերի ջարդերի զոհերի հիշատակի եւ բռնագաղթված հայ բնակչության իրավունքների պաշտպանության օր՝ նշվում է փետրվարի 28-ին:

Հոդված 8. Կանանց միջազգային օր

Կանանց միջազգային օր՝ նշվում է մարտի 8-ին, ոչ աշխատանքային օր:

Հոդված 9. Մայրության եւ գեղեցկության տոն

Մայրության եւ գեղեցկության տոն՝ նշվում է ապրիլի 7-ին:

Հոդված 10. Հայաստանի Հանրապետության քաղաքացու օր

Հայաստանի Հանրապետության քաղաքացու օր՝ նշվում է ապրիլի վերջին շաբաթ օրը: Մայիսի 1-ը երկուշաբթի լինելու դեպքում Հայաստանի Հանրապետության քաղաքացու օրը նշվում է ապրիլի վերջին կիրակի օրը:

Հոդված 11. Հայ կինոյի օր

Հայ կինոյի օր՝ նշվում է ապրիլի 13-ին:

Հոդված 12. Հարկ վճարողի օր

Հարկ վճարողի օր՝ նշվում է ապրիլի 19-ին:

Հոդված 13. Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակի օր

Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակի օր՝ նշվում է ապրիլի 24-ին, ոչ աշխատանքային օր:

Հոդված 14. Աշխատանքի օր

Աշխատանքի օր՝ նշվում է մայիսի 1-ին, ոչ աշխատանքային օր:

Հոդված 15. Երկրապահ-աշխարհազորայինի օր

Երկրապահ-աշխարհազորայինի օր՝ նշվում է մայիսի 8-ին:

Հոդված 16. Հաղթանակի եւ խաղաղության տոն

Հաղթանակի եւ խաղաղության տոն՝ նշվում է մայիսի 9-ին, ոչ աշխատանքային օր:

Հոդված 17. Ընտանիքի օր

Ընտանիքի օր՝ նշվում է մայիսի 15-ին:

Հոդված 18. Ուսանողների եւ երիտասարդների օր

Ուսանողների եւ երիտասարդների օր՝ նշվում է մայիսի 16-ին:

Հոդված 19. Հանրապետության տոն

Հանրապետության տոն՝ նշվում է մայիսի 28-ին, ոչ աշխատանքային օր:

Հոդված 20. Երեխաների իրավունքների պաշտպանության օր

Երեխաների իրավունքների պաշտպանության օր՝ նշվում է հունիսի 1-ին:

Հոդված 21. Սուրբ Էջմիածնի տոն

Սուրբ Էջմիածնի տոն՝ նշվում է Սուրբ Զատիկից 64 օր հետո:

Հոդված 22. Խորհրդային տարիներին բռնադատվածների հիշատակի օր

Խորհրդային տարիներին բռնադատվածների հիշատակի օր՝ նշվում է հունիսի 14-ին:

Հոդված 23. Հայրերի օր

Հայրերի օր՝ նշվում է հունիսի երրորդ կիրակի օրը:

Հոդված 24. Սահմանադրության օր

Սահմանադրության օր՝ նշվում է հուլիսի 5-ին, ոչ աշխատանքային օր:

Հոդված 25. Սինջարի եզդիների ցեղասպանության զոհերի հիշատակի օր

2014 թվականի՝ Սինջարի եզդիների ցեղասպանության զոհերի հիշատակի օր՝ նշվում է օգոստոսի 3-ին:

Հոդված 26. Նավասարդ

Նավասարդ՝ ազգային ավանդույթների, մշակույթի եւ համայն աշխարհի հայերի միասնության օր՝ նշվում է օգոստոսի 11-ին:

Հոդված 27. Պետական խորհրդանիշների օր

Պետական խորհրդանիշների օր՝ նշվում է օգոստոսի 23-ին:

Հոդված 28. Գիտելիքի եւ դպրության օր

Գիտելիքի եւ դպրության օր՝ նշվում է սեպտեմբերի 1-ին:

Հոդված 29. Երեւանի եւ մարզերի օրեր

Երեւանի եւ մարզերի օրեր՝ նշվում է սեպտեմբերի 5-ին հաջորդող առաջին շաբաթ օրից սկսած յուրաքանչյուր շաբաթ օր հետեւյալ հերթականությամբ՝ Գեղարքունիքի օր, Շիրակի օր, Արմավիրի օր, Արարատի օր, Արագածոտնի օր, Լոռու օր, Տավուշի օր, Երեւանի օր, Սյունիքի օր, Կոտայքի օր, Վայոց ձորի օր:

Հոդված 30. Անկախության տոն

Անկախության տոն՝ նշվում է սեպտեմբերի 21-ին, ոչ աշխատանքային օր:

Հոդված 31. Ուսուցչի օր

Ուսուցչի օր՝ նշվում է հոկտեմբերի 5-ին:

Հոդված 32. Հայաստանի Հանրապետության ազգային փոքրամասնությունների օր

Հայաստանի Հանրապետության ազգային փոքրամասնությունների օր՝ նշվում է հոկտեմբերի առաջին կիրակի օրը:

Հոդված 33. Թարգմանչաց տոն

Թարգմանչաց տոն՝ նշվում է հոկտեմբերի երկրորդ շաբաթ օրը:

Հոդված 34. Տեղական ինքնակառավարման օր

Տեղական ինքնակառավարման օր՝ նշվում է նոյեմբերի 10-ին:

Հոդված 35. Երկրաշարժի զոհերի հիշատակի եւ աղետներին դիմակայունության օր

Երկրաշարժի զոհերի հիշատակի եւ աղետներին դիմակայունության օր՝ նշվում է դեկտեմբերի 7-ին:

Հոդված 36. Ցեղասպանությունների դատապարտման եւ կանխարգելման միջազգային օր

Ցեղասպանությունների դատապարտման եւ կանխարգելման միջազգային օր՝ նշվում է դեկտեմբերի 9-ին:

Հոդված 37. Մեռելոց օրեր

Հայ Առաքելական Եկեղեցու կողմից նշվող տաղավար տոներին՝ Սուրբ Ծնունդ եւ Աստվածհայտնություն, Սուրբ Զատիկ, Վարդավառ, Վերափոխումն Սբ. Աստվածածնի, Խաչվերաց հաջորդող մեռելոց օրերը համարվում են ոչ աշխատանքային:

Հոդված 38. Այլ տոների եւ հիշատակի օրերի սահմանման կարգը

Հայաստանի Հանրապետությունում կարող են նշվել նաեւ ավանդական եւ եկեղեցական տոներ, միջազգային օրեր, իսկ կառավարության որոշմամբ՝ մասնագիտական եւ այլ տոներ ու հիշատակի օրեր:

Հոդված 39. Ոչ աշխատանքային օրերի սահմանման կարգը

Բացառիկ նշանակության իրադարձությունների առթիվ կամ Հայաստանի Հանրապետության տոների եւ հիշատակի օրերի հետ կապված կառավարությունը կարող է սահմանել ոչ աշխատանքային օրեր, բայց ոչ ի հաշիվ հաջորդող կամ նախորդող հանգստյան օրերի:

Հոդված 40. Ազգային փոքրամասնությունների ազգային տոները եւ հիշատակի օրերը

Ազգային փոքրամասնություններին պատկանող՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիները կարող են նշել իրենց ազգային տոները եւ հիշատակի օրերը, եթե դրանք չեն հակասում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը: Հայաստանի Հանրապետության կառավարությունը, ազգային փոքրմասնությունների առաջարկով, որոշում է ազգային փոքրամասնությունների համար ոչ աշխատանքային օրերը:

Հոդված 41. Օրենքի ուժի մեջ մտնելը

Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման պահից»:

Հիմնավորում

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՈՆԵՐԻ ԵՎ ՀԻՇԱՏԱԿԻ ՕՐԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

1. Ընթացիկ իրավիճակը եւ իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը

2001թ. հունիսի 24-ին նախագահի առարկությամբ ընդունված «Հայաստանի Հանրապետության տոների եւ հիշատակի օրերի մասին» օրենքը հետագայում կրել է բավական շատ փոփոխություններ, ընդ որում, ավելացված հոդվածները տեղադրվել են առանց ժամանակագրական եւ իմաստային կապի, առաջացնելով խառնաշփոթ: Ստեղծվել է մի պատկեր, երբ օրինակ, Հոդված 4.-ը՝ Մայրության եւ գեղեցկության տոնը, լրացված է 4.1, 4.2 եւ 4.3 հոդվածներով, որոնք որեւէ կապ չունեն մայրության տոնի հետ: Նման օրինակները շատ են: Բացի այդ, խախտվել է տոների եւ հիշատակի օրերի ժամանակագրային հերթականությունը: Այսպես, Հոդված 16-ը եւ հոդված 17-ը, որոնք վերաբերում են Սուրբ Վարդանանց տոնին եւ Սուրբ Էջմիածնի տոնին, որոնք նշվում են տարվա առաջին կեսին, հայտնվել են դեկտեմբերին նշվող հիշատակի օրերից եւ տոներից հետո:

Միաժամանակ մինչ այժմ հանգստյան օր սահմանված չէ ազգային փոքրմասնությունների համար, իրենց գլխավոր տոնը կամ տոները նշելու համար: Տոնացույցում տեղ չի գտել նաեւ աշխարհի ամենահին տոներից մեկը՝ Նավասարդը, բացի այդ, տոնացույցում ամրագրված չէ Երեւանի եւ մարզերի օրերը: Շատերի համար նաեւ դժգոհություն եւ անհարմարություններ է առաջացնում այն, որ Հայ առաքելական եկեղեցու տաղավար հինգ տոներից հետո նշվող մեռելոցները չեն համարվում հանգստյան օրեր:

Գործող օրենքով կառավարությանը թույլատրվում է հանգստյան օրը վերածել աշխատանքայինի, ինչը անընդունելի է զբոսաշրջությունը զարգացման հիմնական ուղղություններից մեկը սահմանած երկրի համար: Այս ամենը, ինչպես նաեւ մի քանի այլ հանգամանքներ անհրաժեշտություն է առաջացրել վերանայել գործող օրենքը, հաշվի առնել բացերը, առկա առաջարկները, վերացնել խառնաշփոթը եւ բերել պատշաճ տեսքի:

2. Առաջարկվող կարգավորման բնույթը

Առաջարկվող փոփոխություններով հիմնականում պահպանվել են արդեն իսկ գոյություն ունեցող տոնական եւ հիշատակի օրերը եւ դրանք բերվել են առավել պատշաճ եւ ժամանակագրությունն ու տրամաբանությունը պահպանած կարգի:

Յուրաքանչյուր տոնի եւ հիշատակի օրվա համար սահմանվել է առանձին հոդված, առանց 4.1 կամ 5.2 թվանշումների, պահպանվել է ժամանակագրությունը:

Ամբողջապես պահպանվել են հետեւյալ հոդվածները՝ Հոդված 1, 2, 21, 22, 3, 4, 4.3, 5, 6, 8, 8.1, 8.2, 9, 10, 101, 11.1, 12, 13, 13.1, 13.2, 14, 14.1, 15, 15.1, 16, 17, 18, 22-ը: Փոփոխվել են միայն համարակալումները:

Որոշակի փոփոխություններ են կրել մի քանի հոդվածներ: Այսպես, 4.1 հոդվածը ստացել է հետեւյալ բովանդակությունը. «Հոդված 10. Հայաստանի Հանրապետության քաղաքացու օր՝ նշվում է ապրիլի վերջին շաբաթ օրը: Մայիսի 1-ը երկուշաբթի լինելու դեպքում Հայաստանի Հանրապետության քաղաքացու օրը նշվում է ապրիլի վերջին կիրակի օրը»: Կարծում ենք այս ձեւակերպումն ավելի հստակ է եւ պարզ, քան գոյություն ունեցող կարգավորումը: Հոդված 4.2-ը առաջարկում եմ շարադրել հետեւյալ փոփոխմամբ. «Հոդված 11. Հայ կինոյի օր՝ նշվում է ապրիլի 13-ին»: Գործող օրենքով Հայ կինոյի օրը նշվում է ապրիլի 16-ին, սակայն բոլոր

ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ հայկական առաջին ֆիլմի առաջին ցուցադրությունը տեղի է ունեցել ոչ թե ապրիլի 16-ին, այլ 13-ին: Առաջարկում եմ նաեւ հոդված 7-ը շարադրել հետեւյալ խմբագրմամբ. «Հոդված 15. Երկրապահ-աշխարհազորայինի օր՝ նշվում է մայիսի 8-ին»: Այս փոփոխությամբ մենք կհիշատակենք ոչ միայն մեկ առանձին վերցրած կազմակերպության, այլ բոլոր ժամանակներում բանակի կողքին կանգնած հայ աշխարհազորայիններին: Այդպես էլ չհիմնավորվեց, թե ինչու Հայաստանում հայրերի օրը պետք է նշվի հենց հունիսի 17-ին, ուստի առաջարկում եմ հոդված 10.2-ը շարադրել հետեւյալ խմբագրությամբ. «Հոդված 23. Հայրերի օր՝ նշվում է հունիսի երրորդ կիրակի օրը»: ՄԱԿ-ի օրացույցով եւս հայրերի օրը նշվում է հենց հունիսի երրորդ կիրակի օրը: Գործող օրենքի հոդված 11-ով սահմանված է, որ նույն օրը՝ հուլիսի 5-ին նշվում է ինչպես սահմանադրության, այնպես էլ պետական խորհրդանիշների օրը: Առաջարկում եմ հուլիսի 5-ը թողնել որպես սահմանադրության օր, իսկ պետական խորհրդանիշների համար սահմանել առանձին օր՝ օգոստոսի 23-ը, երբ Անկախության հռչակագրի ընդունումից հետո առաջին անգամ կառավարության շենքի վրա բարձրացավ Հայաստանի հանրապետության եռագույն դրոշը: Այսպիսով առաջարկում եմ հետեւյալ տարբերակը՝ «Հոդված 24. Սահմանադրության օր՝ նշվում է հուլիսի 5-ին, ոչ աշխատանքային օր» եւ «Հոդված 27. Պետական խորհրդանիշների օր՝ նշվում է օգոստոսի 23-ին»: Հոդված 19-ը առաջարկում եմ հետեւյալ խմբագրմամբ՝ «Հոդված 39. Բացառիկ նշանակության իրադարձությունների առթիվ կամ Հայաստանի Հանրապետության տոների եւ հիշատակի օրերի հետ կապված կառավարությունը կարող է սահմանել ոչ աշխատանքային օրեր, բայց ոչ ի հաշիվ հաջորդող կամ նախորդող հանգստյան օրերի»: Փորձը ցույց է տալիս, որ հանգստյան օրերից մեկը աշխատանքային դարձնելն առաջացնում է բազմաթիվ անհարմարություններ, ֆինանսական կորուստներ պատճառելով եւ քաղաքացիներին եւ տնտեսվարողներին: Միաժամանակ, զբոսաշրջությունը որպես գերակա ուղղություններից մեկը հռչակած երկրում ցանկալի չէ, հանգստյան օրերի կրճատումը: Մասնագետներն էլ նշում են, որ մեկ ավելի հանգստյան օրը ոչ թե հարված է տնտեսությանը, այլ խթան: Հոդված 20-ը առաջարկում եմ ընդունել հետեւյալ շարադրմամբ. «Հոդված 40. Ազգային փոքրամասնություններին պատկանող՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիները կարող են նշել իրենց ազգային տոները եւ հիշատակի օրերը, եթե դրանք չեն հակասում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը: Հայաստանի Հանրապետության կառավարությունը, ազգային փոքրմասնությունների առաջարկով, որոշում է ազգային փոքրամասնությունների համար ոչ աշխատանքային օրերը»: Բացարձակապես անհրաժեշտություն է, որ Հայաստանում ապրող ազգային փոքրամասնությունների համար, իրենց ներկայացուցիչների հետ խորհրդակցելով, ընդունվի ոչ աշխատանքային օրեր: Սրանով մենք մեր վերաբերմունքը կարտահայտենք նրանց նկատմամբ, կբարձրացնենք Հայաստանի միջազգային հեղինակությունը եւ նաեւ կօգնենք եւ գործատուներին եւ հենց ազգային փոքրմասնություններին, որոնք այսօր դժվարությունների են հանդիպում իրենց կարեւորագույն տոները նշելիս, երբ այն համընկնում է աշխատանքային օրվա հետ:

Միաժամանակ առաջարկում եմ ընդունել մի քանի նոր հոդվածներ:

Տոնացույցում առկա է Թարգմանչած տոնը, բայց կարեւորում եմ հայ գրերի գյուտի հեղինակին՝ Մեսրոպ Մաշտոցին նվիրենք նաեւ մեկ առանձին օր եւ այն նշենք նրա մահվան օրը՝ փետրվարի 17-ին, Մայրենի լեզվի օրվանից չորս օր առաջ եւ կունենանք մի ամբողջ շաբաթ նվիրված մեր գրերին եւ լեզվին:

Ունենալով աշխարհում ամենահայտնի հիշատակված տոներից մեկը՝ Նավասարդը, մենք անկախության վերանվաճումից հետո այն չենք ընդգրկել մեր տոնացույցում: Առաջարկում եմ լրացնել այս բացը եւ այս տոնը ներառել օրենքում հետեւյալ շարադրմամբ. «Հոդված 26. Նավասարդ՝ ազգային ավանդույթների, մշակույթի եւ հայերի միասնության օր՝ նշվում է օգոստոսի 11-ին»: Այս տոնը ոչ միայն կնպաստի ազգային մշակույթի արժեքների պահպանմանը եւ տարածմանը, այլ կարեւոր օր կդառնա սփյուռքահայերի Հայաստան ժամանելու եւ տոնակատարություններին մասնակցելու համար: Խելամիտ քաղաքականության դեպքում այս տոնը լրացուցիչ խթան կհանդիսանա զբոսաշրջության զարգացման համար:

Մինչ այս պահը Երեւանի օրը նշվում է որպես տեղական նշանակության օր, իսկ մարզերը, որպես այդպիսին իրենց տոնական օրերը չունեն: Պետականության կայացման համար վաղուց հասունացել էր, որ առանձին օրերի նշվի մարզերի եւ Երեւանի տոնը: Հստակ սահմանել եմ, թե որ օրերին, որ մարզի տոնը պետք է նշվի, հաշվի առնելով նաեւ բնակլիմայական պայմանները: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ մարզերի բնակիչները այլ մարզերում լինում են հազվադեպ կամ չեն լինում ընդհանրապես: Մարզերի տոները ոչ միայն պետք է անցկացվի տվյալ մարզի մարզկենտրոնում եւ քաղաքներում, այլ այդ մարզի ներկայացուցիչները այդ օրը միջոցառումներ պետք է կազմակերպեն այլ մարզերում, համակողմանիորեն ներկայացնելով իրենց մարզերը: Սա նաեւ կնպաստի ներքին զբոսաշրջության զարգացմանը:

Հաշվի առնելով ՀՀ քաղաքացիների առաջարկները, կարծիքները, առաջարկում եմ հանգստյան օրեր սահմանել Հայ Առաքելական Եկեղեցու կողմից նշվող տաղավար տոներին՝ Սուրբ Ծնունդ եւ Աստվածհայտնություն, Սուրբ Զատիկ, Վարդավառ, Վերափոխումն Սբ. Աստվածածնի եւ Խաչվերացին հաջորդող մեռելոց-հիշատակի օրերը սահմանել ոչ աշխատանքային: Տեսակետներ կան, թե այս որոշմամբ հարված կհասցնենք տնտեսությանը, բայց այս փաստարկը հիմնավոր չէ: Հիմնավորված չէ նաեւ բանկային համակարգի խնդիրների վերաբերյալ հիշատակումները: Նույն կերպ կարելի է հիմնավորել եւ պահանջել աշխատանքային օրեր դարձնել նաեւ մյուս բոլոր ոչ աշխատանքային օրերը: Այս որոշումը շատ դրական բարոյահոգեբանական ազդակ կհանդիսանա մեր հանրության համար:

Կարծում եմ առաջարկվող փոփոխությունները միայն դրական նշանակություն կունենան մեր երկրի բարոյագոգեբանական վիճակի եւ սոցիալ-տնտեսական զարգացման վրա: